



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 19 ՀՈԿՏԵՄԵՐ, 2015

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 51

ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ

Ողորմէ ինձի, ով Աստուած, դուն՝ որ այնքան ողորմած ես.  
քու անսահման գթութեամբդ իմ յանցանքս ներէ ինձի:  
Անբողջութեամբ մաքրէ զիս իմ անօրէնութենէս, եւ իմ մեղքէս զիս սրբէ:  
Գիտեմ, յանցանք գործեցի, մեղքս բնաւ միտքէս չ'ելլեր:  
Քեզի, միայն քեզի դէմ մեղանչեցի, Տէր,  
գործեցի այն՝ ինչ որ դուն չարիք կը նկատես:  
Ուստի արդար ես, ինչ վճիռ ալ արձակես.  
Իրաւացի ես, ինչ պարիժ ալ սահմանես:  
Ուստի ներումիդ ցօղով սրբէ զիս, եւ պիտի մաքրուիմ,  
լուս զիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ:  
Յնծութիւնն ու ուրախութիւնը վերադարձուր ինձի,  
եւ փառապաճ ոսկորներս պիտի ցնծան:  
Նկատի մի՛ առնէր մեղքերս, ներէ բոլոր յանցանքներս:  
Մաքուր սիրտ մը հաստատեմ մէջս, ով Աստուած, նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս:  
Ներկայութենէս մի՛ գրկեր զիս, Տէր, եւ քու Սուրբ Հոգիդ թող չլքէ զիս:  
Փրկութեանդ ցնծութիւնը փուր ինձի, եւ քու կամբքիդ հնազանդ հոգի դիր իմ մէջս:  
Որպէսզի անօրէններուն սորվեցնեմ քու կամբքդ, եւ մեղաւորները քեզի դառնան:  
Բաց իմ շրթներս, ո՛վ Տէր, թող բերանս քեզի օրհնութիւն երգէ:  
Եթէ գոհ կամենայիր՝ պիտի մատուցանեի, բայց ողջակէզ դուն չես ուզեր:  
Ուզած գոհդ զոչումով լի հոգի մըն է, ով Աստուած,  
հետեւաբար մի՛ մերժեր զոչումնալից եւ ընկճուած իմ սիրտս:

## ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիանալաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

## ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԵԼԻՑ ԼԴ - ԼԵ (34-35) ԳԼՈՒԽՆԵՐ



### ՄՈՎՍԷՍ ՄԻՆԱ ԼԵՈՒՆԷՆ ԿԻՋՆԷ (34:29-35)

Հեղափոխական երևույթ մը կը պարզուի, երբ Մովսէս քառասուն օր եւ քառասուն գիշեր ոչ հաց կերաւ եւ ոչ ալ ջուր խմեց, Սինա լեռնէն վար կ'իջնէ դէմքը լուսափայլ: Մովսէս երեք անգամ Սինա լեռ կը բարձրանայ, բայց միայն երրորդին իր դէմքը լուսափայլ վար կ'իջնէ: Այսպէղ կարելի է նախ այնպէս առնել, որ այն մարդը երբ իր մէջ կը կրէ Աստուծոյ պատուիրանները, Աստուծոյ կը լուսաւորուի ներքնապէս, եւ այդ լոյսին ճառագայթումը կ'ունենայ արտաքինապէս: Միւս կողմէ, նաեւ կայ մէկ այլ ուրիշ երես մը, ուր այս անգամ ժողովուրդը չէր կրնար նայիլ անոր, ուստի քօղով ծածկուած էր: Այս երևույթին զուգահեռ կրնանք գրնել նոյնինքն Քրիստոսի կեանքին մէջ, երբ Քրիստոս Ինք եւս իր աստուածային փառքով երկրի վրայ միշտ լուսափայլ չերեցաւ: Անոր փառքը կարծէք մարմնի վարագոյրով ծածկուած էր, որպէսզի կարենային տեսնել գինքը, այլապէս դժուար: Միայն առիթով մը, երբ ուզեց այդ փառքը ցոյց տալ Իր աշակերտներուն Թափօր լեռան վրայ, այլակերպութեան օրը, որուն չկրցան նայիլ Իր աշակերտները եւս:

Այս մասին Պօղոս Առաքեալ (Բ Կորնթ 3:7-18)ին մէջ երբ Մովսէսի երեսին լուսափայլութիւնը կը ներկայացնէ իբրեւ Օրէնքի միջոցաւ տրուած փառքը, որ ժամանակաւոր է, իսկ Ս. Հոգիին տրուած լուսափայլութիւնը շար աւելի փառաւոր: Անոր համար ալ Իսրայէլի ժողովուրդը իր հայեացքը երբեք չկտրեց Օրէնքէն զայն նկատելով գերազանց, եւ արոր համար ալ չկրցաւ տեսնել այն ինչ որ այդ Օրէնքը կ'ուզէր մարմնանշել, որ նոյնինքն Հոգիին փառքն էր, Քրիստոսով եկած փրկութեան պարգեւը, ու անոր բերած փառքը: Արոր համար ալ երբ կը կարդան Օրէնքը, անոնց միտքերը քոց են, քօղով ծածկուած, եւ այդ քօղը կը վերցուի երբ որ գՔրիստոս ճանչնան:

### ՇԱՐԱԹԻՆ ՀԱՄԱՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ (35:1-3)

Անգամ մը եւս Շարաթի մասին պատուէր: Նոյն պատուէրին կրկնութիւնն է, որ սակայն կը շեշտուի անոր կարեւորութիւնը անոր մէջ տեսնելով ոչ թէ միայն փառացի գործադրելու այդ պատուէր, այլ անոր մէջ տեսնելու ապագայի կապուած հանգիստ, որ յաւիտենական հանգիստն է, որ կը կոչուի նաեւ Տիրոջ հանգստութեան օր:

### Ս. ԽՈՐԱՆԻՆ ԸՆԾԱՆԵՐԸ (35:4-9)

Մովսէսի կը պատուիրէ ժողովուրդին ընծաներ բերելու Տիրոջ Վկայութեան Խորանին համար, պայմանաւ սակայն, այդ ընծաները ըլլան. «Մտքով յօժար»: Այս արտայայտութիւնը քանի մը անգամ պիտի կրկնուի: Տերը կամաւոր նուէր կամ ծառայութիւն կ'ուզէ, որովհետեւ խորքին մէջ Իր նպատակը նուէր ուզել չէ: Որպէս Արարիչ ամէն ինչ Իրն է, ուրեմն մենք ի՞նչպէս կրնանք կամ ի՞նչ կրնանք տալ Իրեն որպէս նուէր: Հակառակ այն իրողութեան, որ Աստուած Ինք է թելադրողը, որ այս ինչ կամ այն ինչ նուէրը կամ զոհը պիտի ընծայես, միւս կողմէ կ'ըսենք Աստուած նուէրի կարիքը չունի: Հիմնականին մէջ Աստուած ոչ թէ նուէրը կ'ուզէ, այլ մեր ընծայելու տրամադրութիւնը: Աստուծոյ ուզածը երախտագրութիւն սիրտն է: Մարդ ուրիշին հանդէպ իր ուրախութիւնը, երախտագրութիւնը, շնորհակալութիւնը կը յայտնէ իրմ բան մը տալով: Նոյն ձեւով մեր շնորհակալութիւնը յայտնելու Աստուծոյ նիւթական արտայայտութեամբ: Բայց հիմնականին մէջ Աստուած ընծան չէ որ կը կամենայ, ուրեմն նուէրին մեծութիւնը կամ փոքրութիւնը նշանակութիւն չունի, այլ անոր տալու տրամադրութիւնը ինչպէս պիտի ներկայացնէր Քրիստոսի այրի լուսայի օրինակով. «Անոնք իրենց աւելորդացին տուին, իսկ այս այրին իր ամբողջ ունեցածը», որ կը նշանակէ ամբողջը, առանց վերապահութեան Աստուծոյ տրամադրութեան տակ դնելու: Նաեւ համեմատել Գործք (5 գլխ): Պօղոս Առաքեալ կ'ըսէ Աստուծոյ ուզած լուսագոյն նուէրը օրհնութեան պատարագն է, այսինքն՝ շնորհակալութիւնն է, այլ խօսքով՝ աղօթքը (Եբր 13:15-16): Մէկ այլ ուրիշ տեղ կ'ըսէ. «Ձեր հոգիները ընծայեցէք Աստուծոյ զոհասեղանին»:

Այսինքն այն անմիջական կապն ու մտերմությունը Աստուծոյ հետ: Բայց եթէ Աստուած, Քրիստոսի բացարձեւամբ, ամէն ինչ գիտէ ինչ բանի պէտք ունինք, դեռ չիսնդրած (Մատ 6:7-8), ապա ինչո՞ւ աղօթել եւ խնդրել: Որպէսզի մարդը ինք կարենայ իր վիճակը հասկնալ, պահանջքը գիտնալ եւ լուսագոյն ձեռով արտայայտել: Քրիստոս պիտի ըսէ. «Երբ կ'աղօթէք, նախ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը» (Մատ 6:33): Ճիշդ է, որ Աստուած առանց մարդուն խնդրանքին ալ պիտի բերէ այդ թագաւորութիւնը, բայց երբ մենք կը խնդրենք, անով ցոյց տալու մեր պահանջքն ու փափաքը, մանաւանդ երբ կ'ապրինք անիրաւ ու անարդար աշխարհի մը մէջ, արդեօք պիտի չուզէինք որ Աստուծոյ թագաւորութիւնը իջիւնք: Նոյնպէս ալ այդ փափաքը մնայուն ըլլալու համար եւ ըստ այնմ մեր կեանքը ուղղելու: Ի վերջոյ, նուէրը տալ մարդուս կը ստրկեցնէ երախտագիտութիւն, շնորհակալ ըլլալ տրուածին, եւ անով հետզհետէ մարդը հասնի այն հանգրուանին, ուր գիտակցի, թէ զԱստուած կարելի է պաշտել հոգիով եւ ճշմարտութեամբ (Յովի 4:23), որովհետեւ Աստուած այդպիսի երկպագողներ կ'ուզէ:

### **ՏԻՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ (35:10-19)**

Սովորական Վրան մը չէ, այլ Տիրոջ ներկայութեան վրանն է, այսինքն պիտի յիշցնէ որպէսզի Տիրոջ ներկայութիւնը: Այնքան արեւն, որ մարդը նիւթական է ու անկարար, կարիքը ունի նիւթական քուտակներու, որպէսզի անով դաստիարակուի, պարտաստուի հասնելու մինչեւ աննիւթականին:

Այս բաժնին մէջ եւս Տիրոջ պատուէրն է, «**սրտով իմաստուն եղողները թող գան ու Տիրոջ պատուիրածները շինեն**» (10 հմբ): Աստուածային իմաստութեան մասին է խօսքը, այսինքն մարդիկ որոնք իմաստութիւնը ունին Աստուծոյ կամքը հասկնալու, ոչ թէ պարզապէս շինելու, այլ՝ շինուածին մէջ տեսնելու Աստուծոյ կամքը եւ ըստ այնմ շինելու: Որովհետեւ ամէն մէկ առարկայ կամ սպաս որ պիտի գործածուի Վկայութեան Խորանին համար Աստուած դաստիարակիչ ծրագիր մը ունի անոր մէջ: Հետեւաբար շինողը ըստ այնմ շինելու:

### **ԺՈՂՈՎՈՒՐԸ ԻՐ ԸՆԾԱՆԵՐԸ ԿՐ ԲԵՐԷ (35:20-29)**

Այս բաժնին մէջ քանի մը անգամ կը կրկնուի հետեւեալ արտայայտութիւնը, ինչ որ նախապէս ալ ըսուեցաւ «**Յօժարասիրտ եղողներ ու բոլոր հոգիով կամեցողներ, սրտով փափաքողներ, յօժարական ընծայ, յօժարութիւն ունէին բերելու**» (21, 26, 29 հմբ): Հետաքրքրական է, որ ով ինչ ունի բերելիք բերաւ, սակայն պայմանաւ որ այդ բերուածը յօժարութեամբ ըլլայ: Վերջ ի վերջոյ, ինչ որ ունինք մերը չէ, այլ մեզի տրուած, ուստի այդ տրուածէն բաժինը պէտք է հանել եւ յօժարութեամբ Աստուծոյ ընծայել, անով մեր շնորհակալութիւնը եւ երախտագիտութիւնը յայտնելու:

## **ԱՐՈՐՔ**

**Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ք քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:**